

ԵՂԲՕՐ ՏԵՂ՝

(Ե. ՊՕԼԻՏԻԿԱՎԱԿԱՅԱ — ՄԻԽԱՅԼՈՎԱՅԻ)

Անցեալ գարնան եւ գնում էի Պ. քա-
շաքը: Վագոնի լուսամուտների առջև, ու-
րոնց մօտ եւ նստել էի, փայլփլում էին
կանաչազարդ դաշտերը, զանգորահեր կէշի
ծառաստանները, ձորերն կարկաչուն աղ-
բերակներով. պայծառ արեգակը լուսաւո-
րում էր գարնան ամբողջ հիւնալի պատ-
կերը եւ ուրախութիւն էր պատճառում
մարդու սրտին, տեսնելով այդ պայծառ
օրը, թարմ խոտերը եւ կապոյտ անամպ
երկինքը: Օրը կուրակի էր. երբոր մեր
գնացքը կանգ առաւ մի կայարանի առ-
ջև, բաց լուսամուտից մեզ հասաւ եկեղե-
ցու զանգակների զօղանչիւնը. ես խա-
չակնքեցի երեսիս, միևնոյն արեց դէմս
նստած մի տարիքոտ կին: «Երևի ուշ պա-
տարագի եմ հրաւիրում», ասաց իմ ու-
ղեկցուհին: «Այո՛ ասացի ես ներան», «Այժմ
ժամի 9ն է»: Այդ րօպէին մեր ուշադրու-
թիւնը գրաւեցին հարմոնիայի հնչիւններն
և մարդկանց աններդաշնակ ձայները, որոնք
երգում էին ինչ որ դիւցազնական երգ: Մեր
լուսամուտին հաւասարեց մի փոքրիկ
խումբ երիտասարդների, որոնցից շատերը
հարբած էին. առջևից գնում էր փոքրը,
մօտ քսան տարեկան. նա նուագում էր
հարմոնիայի վրայ, ստեղայն ըստ երևոյ-
թին նրա ոտները վատ էին լսում իրեն,
որովհետեւ երբեմն էր մի կողմից միա-
սը, եւ, անելով տասը քայլ եւս, փոռեց
գետնին, յարուցանելով այդպիսով քրքիշ,
հրեոց, աղաղակ և անվայել կատակներ
իւր հարթած ընկերների՝ ամբողջ մէջ:
«Ահա, ներիւ Տէ՛ր, ինչպէս շուտ եմ քեֆի
սկսել», ասաց իմ ուղեկցուհին, «մար-
դիկ դեռ նոր եմ հաւաքուում պատարագի,
իսկ նրանք, երևի, զինեստունն են եղել:
Գործարանի բանւորներն են, ինչ են այս

քաջերը, «Գործարանական են, ի հարկ
է. այս շրջանում շատ բամբակեղէնի գոր-
ծարաններ կան, որոնք տալիս են բաւա-
կանին աշխատանք շրջակայքի ազգաբնա-
կութեան»: — Հը՛, շատ կ'իմայ աշխա-
տանքից տարւայ վերջին քաղաքին քեֆ-
չինքներին, անտարակոյս, բոլորը կը վատ-
նեն քեֆերի վրայ, նկատեց իմ ուղեկցու-
հին»: Շատ ցաւեր, դարձեր, դժբաղդու-
թիւններ է պատճառում գինին Ռուսիա-
յում քեֆի ժամանակ: Շատ ընտանիքներ
այդպիսով քայքայվում են, և շատ յան-
ցանքներ են կատարւում, — ասացի ես»: —
«Աւելի լաւ է լուէք, ոչինչ չ'ասէք», պա-
տասխանեց ուղեկցուհին, «սիրտս սղծվում
է, ճմվում է, երբ մտածում եմ, որքան
ամեն տեսակ ցաւեր է պատճառում այդ
գինին ժողովրդին: Ահա՛, կամի՛ր, ես կը
պատմեմ ձեզ մի սարսափելի դէպք, որ
տեղի է ունեցել մեր Հարեան գիւղում,
Լիկովկայում»: Ի հարկ է, ի հարկ է,
պատմեցէք: Իւ ժամանակը ճանապար-
հին աննկատելի կ'անցնի, և ձեր պատմած-
քը կը լսեմ սիրով, գուցէ, եթէ և իցէ,
մի ժամանակ կը պատմեմ մէկին իբրեւ
օգտաւէտ և խրատական մի բան: — «Ա-
հաւասիկ, դէ լսեցէ՛ք»:

Ա.

Վաղուց խաւարել է ձմեռայն կարճ օ-
րը: Զիւնը, որ առաւօտունից տեղում էր,
կէս գիշերին քամին դէս ու դէն էր տա-
նում և փոռում, տարածում ճանապարհ-
ներին: — «Աստուած ցոյց չ'տայ, այդ-
պիսի եղանակին ուշանայ մարդ դուրսը,
խորհուրդն էին իրար մէջ, Լիկովկայի գեղը-
կուհիները, պատրաստուելով պտուկեւ: Եր-
գեցին «առաջին արագագոյնները» և ամբողջ
ժողովուրդը խորը քնի մէջ ընկղմուեց:
Զնացած էին նոյն իսկ շները, որոնք ըն-
տրել էին իրենց համար քամուց պաշտ-
պանւած տեղեր. այդպիսով ոչ մարդիկ
տեսան, ոչ շները լսեցին, ինչպէս տե-
տառից դանդաղ շարժւում էր դէպի գիւղը
սահնակը, որի վրայ նստած էր մի մարդ:

1. Ե. ՊՕԼ. Միեայնուժ «Գիմու գոմերը». Եղբոր
տեղ՝ Պատմուածքը. մեր յարգելի աշխատակցի Ա.
Քէկ-Յովսէփեան նուիրած է «Իր վաղաթաւում Գորգէն
որդու անմոռանալի յիշատակին»:

Անցնելով տնակների ետեւից, սահնակը կանգ առաւ ծայրին գտնւած շինութեան դարպասի մօտ: Սահնակից իջաւ ձեռն մէջ կորած մի մարդ և թխթիկացրեց լուսամուտը:

— Ո՛վ է այնտեղ, ներսից ձայն տուեց մի կանացի ձայն:

— Պատասպարեցէք, բարի մարդիկ, մութ գիշերւայ պատճառով ճանապարհից շեղել եմ, չը գիտեմ, ո՛ւր գնալ, — պատասխանեց եկտորը:

Խրճիթում շարժեցին, դուռը ճռոաց, իսկ մի քաղցից բացեց և պարտիզի դուռը: Դուռս եկաւ մի բարձրահասակ կին՝ իր վրայ առած կարճ մուշտակ և գլխին՝ աղուխ:

— Ողորմութիւն արա՛, աղաւնեակս, տեղ տուր միեւրկու-երեք ժամւայ, — ասաց եկտորը:

— Հրամեցէ՛ք, — պատասխանեց կինը:

— Ի դէպ և ձիւս բակում տեղաւորիր, յարեց եկտորը:

— Եւ ձիւղը համար էլ տեղ կը գտնուի: Կինը բաց արեց դարպասը, ներս առաւ ձին, յետոյ նորից փակեց այն և պարտիզի դռնակը, վերցնելով սահնակից իւրերը եկտորը կնոջ հետ մտաւ խրճիթ: Երբ խրճիթը լուսաւորեց ճարպի մոմով, որ դրած էր պղնձէ աշտանակի մէջ, կինը տեսաւ, որ եկտորը հասարակ գիւղացի չէր: Նա վրան ունէր լաւ քիւրք, գառան մորթուց կարած օձիքով, գլխին՝ գառան մորթուց գլխարկ, ձեռին բռնած ունէր ճանապարհի կաշէ տոպրակ և բարձ:

Հեշտաեղր կ'զգէի, եթէ պարպած չը լինէր ամուլը, իսկ հիմի դժուար է ճարել, ասաց կինը:

— Ի՛նչ թէյի ժամանակ է, շնորհակալ եմ, որ պատասպարեցիք ինձ, ապա թէ ոչ՝ ամբողջ գիշեր թափառել եմ, — պատասխանեց եկտորը:

— Մինչև արշալոյսը բացելը դեռ շատ կայ, պառկեցէ՛ք դուքանի վրայ, նկատեց կինը:

— Ծնորհակալ եմ, աղաւնեակս, կը պառկեմ, երբ քնել կը կտանենամ:

Կինը անցաւ միջնապատի ետեւը, ուր դրած էր նէրա մահճակալը. եկտորը նրստեց սեղանի մօտ, հանեց պարկից մի շիշ օղի, փոքրիկ արծաթէ բաժակը, ապուխտ և ճերմակ հաց: Հէնց նոր էր դատարկել առաջի բաժակը, որ լսեց մի արական խոսքոտ ձայն:

— Դուք, պարոն, ո՞վ է՛ք:

— Եկտորը նայեց իր շուրջը, վեր բարձրացրեց աչքերը դէպի վառարանը. վերեւում այնպիսի թանձր խաւար էր, որ հազիւ նա կարողացաւ նկատել վառարանի վրայից գլուխը քաշ զգած սև չուլ գլուխը:

— Իսկ դու ի՞նչ մարդ ես:

— Ես այս տեղացի եմ, պատասխանեց վառարանի վրայ պառկածը:

— Տանտէր, ուրեմն, իսկ մօրքոյրը, — քո կ'ընէ:

— Ոչ երբէ՛ք: Հարազատ քոյրս է: Նէրան կոչում են՝ Մարիա, իսկ ինձ՝ Իււան:

— Այդպէս դուք «Իւան դա Մարիա»* և ապրում էք միասին:

— Պատ էլ ունինք, մօրս հայրը, նա էլ տանը չի՝ ապրում: «Տիտիկ անող» մարդ չէ:

— Դուք, պարոն, ի՞նչպէս ընկաւ մեզ մօտ: Այս չէ՞ որ մենք մեծ ճանապարհի վրայ չենք ապրում:

— Բուքը գցեց ինձ աշատեղ: Մ'օսկ վայից ձեր քաղաքը երկաթուղով եկայ, իսկ քաղաքում վերցրի բարեկամիս ձին, յոյս ունէի մութը չ'ընկած հասնելու տեղս, — սաստիկ թիփի արեց, ես էլ կորուցի ճաշապարհս:

— Դատ հեշտ կերպով կարելի է շեղւել անծանօթ ճանապարհից, — իրաւացի նկատեց Իվանը:

— Եկայ ձեզ մօտ զանգով: Տեսնում եմ. ինչ — որ հեռվում սևին է տալիս, ոչ էն է՝ մացառ է, ո՛չ էն է շէն: Ձին ուղիղ դէպի ձեր խրճիթը բերեց:

* Շամ. թարգմ. — Երգիկ անուն է:

— Մեր խրճիթը ծայրին է և ուրիշներից հեռու լինելով, այլ և ճանապարհի վրայ գտնուելով՝ ձին երևի ճանապարհի հոտառութիւն ունի։ Իսկ դուք ո՞ր էիք գնում։

— Գիտես ինչ, քաղցր մարդ, ես վաճառական եմ, փայտի առուտուր ունիմ։ Ժողովուրդը անտառակ է և գնել տիկին Արեւիմովայից, Լսել ես այդպիսի մականուն։

— Ինչպէս չեմ լսել։ Արեւիմովսկու անտառակը մեզանից տասը վերստի վրայ է գտնուում։ Դուք ո՞ր կողմից եկաք մեզ մօտ։

— Կարծեմ, հրէն այն տեղից... և վաճառականը ցոյց տուեց ղէպի դուռը։

— Տների ետեից, ուրեմն, և մեր մօտից նոյնպէս տնակների ետեի պարտէզների կողմից, յետոյ դարձնել ղէպի աջ, ինչպէս կը մտնէք անտառը, ուղիղ ճանապարհ է ղէպի Արեւիմովայի։

— Գուցէ՛, դու կ'ուղեկցենս ինձ մինչև անտառ։

— Ինչո՞ւ չ'ուղեկցել, կ'ուղեկցեմ, համաձայնեց իւանը։

— Ուրեմն վերցրո՛ւ բէշ, և վաճառականը լեցրեց բաժակը օղի։

Իւանը իսկոյն իջաւ վառարանից և դատարկեց բաժակը։

— Քոյրդ էլ խմո՛ւմ է օղի, հարցրեց վաճառականը։

— Ձեմ խմում, նրան էլ խորհուրդ չէի տայ խմել, պատասխան տուեց միջնապատի ետեից Մարիան։

— Էհ, դու, չէ՛ն, նախատական ձեռք արտասանեց իւանը։ — Ինչու հրաժարւել, երբ հիւրասիրողը մի պատական մարդ է, վաճառական։ Պարոն վաճառական, թոյլ տուէք մի բաժակ ևս լցնել, դիմեց իւանը եկտրին։

Կուլ տալով միանգամից միւս բաժակը, իւանը նորից բարձրացաւ վառարանի վրայ։ Մարիան քնած չէր, տախտակէ միջնապատի արանքներից նէ տեսնում էր, թէ ինչպէս վաճառականը դարձում ու ժողովում էր ճանապարհորդութեան տո-

պրակից հանած թղթերը, յետոյ հանեց լայնածաւալ դրամակիր քսակը, հանեց այնտեղից մի քանի կապոց փող և սկսեց համարել։

Դուրսը սաստիկ փչում էր թիփին, ձեռն մեծ-մեծ կաթիլները թափոււմ են գետնին, քամին յափշտակում էր օդի մէջ և տարածում զանազան կողմեր։ Ճըրճոտ էր խոտվայոյզ ճպուռն, իսկ վաճառականը դեռ ևս համարում է դրամը և աննկատելի նրանից, որ վառարանի ծխնելոյզից ուշադրութեամբ հետեւում են նրան երկու հրացակ աչքեր, այնպէս տարւած, յափշտակւած ծիածանագոյն թղթադրամներով, որոնք պսպղում են նրա սովորական ձեռքերում։ Համարում է վաճառականը փողերը, իսկ գլխում յարուցւում են մտածմունքներ, մինը միւսից հրապուրիչ. «որքան օգուտ կը վերցնէ արեւիմովսկան անտառակից, որ իր մօտ ունեցած փողերի հետ միասին կ'անէ մի պատկառելի կապիտալ։ այն ժամանակ կարելի է ձեռնարկել պատկառելի առևտրական գործի, որը կ'տայ հարիւր հազարներ։ Համարեց փողերը վաճառականը, սակայն չ'ըրեց իր գրպանը, այլ թողեց սեղանի վրայ։ Անցեալի յիշողութիւնները շարան-շարան անցան նրա աչքերի առջևից, նրանց մէկի վրայ կանգ առաւ։

Երկու տարի առաջ, նրան ասել էին, որ մի պարոն (ազնուական) իր անտառակը ծախում է՝ կտրելու համար։ Գնում է նա այդ աղայի մօտ։ Ազգարակը մեծ չէ՛, տնակը՝ շատ վատ, վեց հօդի երես խաներ։ Ինքը հիւանդ։ Մայրսյեղ կարիքը, նշանակում է, փողի, համարեա՛ չնչին գնով և առայ։

Լաւ յիշում է վաճառականը, ինչպէս անտառակում զարնում էին կացինները և ծառերը խոնարհում էին իրենց հսկայ կատարները նրա առջև։ Թափոււմ են ծառերը, իսկ աղայի (ազնուականի) արտասունքները հոսում են երեսից։ այդպէս ավաւանում էր արգելեալ անտառակին, իսկ վաճառականին՝ հաճելի է, որ ստիպեց

աղային լաց լինել: Քար ու քանդ արեց
անտառակը, մինչև անգամ արմատները
դուրս բերեց և մի քանի հազար արդիւնք
ստացաւ, սակայն յաճախ մորմոքող դէմքը
աղայի գալիս էր նրա յիշողութեան մէջ:
Ջանք էր անում—մոռանալու նրան, բայց
անկարող էր. աննահանջ կանգնած էր
նրա աչքերի առջև:

Որպէս զի հեռացնի իրանից այդ յիշո-
ղութիւնը, վաճառականը կրկին սկսեց
համարել իր փողերը, յետոյ խնամքով
տեղաւորեց փողերը դրամակիր քսակում
և դրեց առնազգեստի կողքի զրպանում,
իսկ կապոցները պաշարի ու օդիի հետ՝
դրեց մէջօքի մէջ և սկսեց նիրհել, սա-
կայն այդ երկար չ'տևեց:

Լսելի եղաւ վաճառականին, որ մէկը
պտտում է խրճիթում և կ'ասես թէ մէկի
ձեռքը իջնում է իր ուսին: Յնցում է,
բարձրացնում է գլուխը — ո՛չ ոք: Խրճի-
թում տիրում է անդորրութիւն, միայն
աղմկարար ճպուռն շարունակում է իր
ձանձրալի երգը: Զգալի թւաց վաճառ-
ականին, որ ձայն տուեց իւանին... Նա
շարժեց և սկսեց յօրանջել, ինչպէս խիստ
քնից յետոյ պատահում է:

— Ժամանակը չէ՞ ճանապարհ ընկնե-
լու, իւան, — ասաց վաճառականը:

— Դեռ մութ է, կասես թէ ակամայ
պատասխանեց իւանը:

— Արդէն ժամի չորսն է... Մինչև որ
մենք անտառին կը հասնենք, կ'սկսի լու-
սանալ:

— Գնանք... — Եւ իւանը վառարանի
վրայից իջաւ. մինչև որ նա կը պատրաս-
տուէր, վաճառականը կանչեց Մարիային:

— Ծնորհակալ եմ, տանտիրուհի՛, որ
դու ծածկեցիր ինձ մութ գիշերից: Ահա
քեզ դրա համար փէշքէշ, ասաց վաճա-
ռականը և դրեց սեղանի վրայ մի ըու-
րլիանոց թղթադրամ:

— Ծնորհակալ եմ ձեզնից, գլուխ
տուեց Մարիան, միայն թէ դուք ինչ բանի
համար էք տալիս: Իմ ծառայութիւնը
աննշան է. մի հեշտաեռ էլ է չըդրեցի:

— Էլի վեր էք կացել, նեղութիւն ես

քաշել, նկատեց վաճառականը: Չես վերց-
նի, ինձ կը վիրաւորես:

— Վերցրու՛, երբ տալիս եմ, կոպիտ
կերպով ասաց իւանը:

Մարիամը իբր թէ չ'լսեց եղբոր խօս-
քերը, իսկ երբ նա դուրս գնաց նախա-
սենեակը, ասաց կէս—ձայնով.

— Ի զուր էք այդպէս վաղ ճամբայ
ելնում... Տես, ինչպէս մութն է, սպա-
սելիք մինչև լուսանալը:

— Չորսի կէսն է, էլ ինչ նստենք,
ես պէտք է այսօր Լեթ լինեմ կայա-
րանում, որպէս զի հասնեմ գնացքին...
Երեւի եղջայրդ ճամբան գիտէ... Ախր
պիտի առաջնորդէ ինձ մինչև անտառը
միայն...

— Այդ այդպէս է, միայն թէ նա ե-
րեկանից դեռ հարբած է... Հաւանական
է, և ինքն էլ ճանապարհը կորցնէ...

— Իսկ քանի վերստ կը լինի մինչև
ձեռ անտառը:

— Վերստից մի քիչ աւել...

— Այստեղ ինչ շեղելու բան կայ:
Անհանգիստ մի՛ լինիր, անփաս կը մնայ
քո իւանը և փէշքէշ էլ կը ստանայ...
Դուք է նա, շուրջը նայեց վաճառականը:

— Երեւի, գնացել է ձիու մօտ, ասաց
Մարիան և դուրս գնաց վաճառականի
հետ խրճիթից: Իւանը դուրս չէր բերել
ձին դարպասից:

Չմեռայ գիշերներ — անվերջ գիշերներ:
Եւ երկրորդ անգամ կանչեցին աքաղաղ-
ները, սակայն դուրսը դեռ եւս մութ էր.
Մարիայի ցունը չէր տանում: Նէ նստեց
դուքանի վրայ, երկու ձեռով ծայրից և
ինչ որ տիրութիւն պատեց նէրա սրտին:
Նէ մտաբերեց իր մանկութիւնը, որբու-
թիւնը, չարաբարոյ խորթ — մօրը, որը
ղրկում էր նէրան, ութը տարեկան մա-
նուկին, ուրիշ գիւղեր մուրացկանութիւն
անելու: Ի միտ բերեց Մարիան իր երի-
տասարդութիւնը տիրալի, — ծանր աշ-
խատանքը, յիշեց իր դառն մատաղ հա-
սակը, իր սիրած մարդու դաւաճանութիւ-
նը... Այդ յիշողութիւնների ազդեցութեան
տակ Մարիան սարսափահար վեր թռաւ,

խաչակնքեց երեսին, իսկ մթազին մտքերն չէին թողնում նէրան: Աննկատելի կերպով այդ մտքերը անցան եղբորը... վերջին ժամանակները նա սկսել է շատ խմել ոգի, իսկ ո՞ր տեղից վերցնել փող հարբեցողութեան համար: Հը՛, կը թալանի վաճառականին, իսկ նրա մօտ փող շատ կայ: Նէ տեսնում էր, ինչպէս նա համարում էր փողերը, ուղիղ է, և եղբայրը տեսաւ, Բայց ինչո՞ւ էր վաճառականը իր փողերը համարում: Չէ՛ որ դա գայթակղեցնում է թոյլ կամքի տէր մարդուն, փորձում էր Մարիան: Թիրաւի ոչ, յանկարծ մտաբերեց նէ, իւանը հարբեցող է՛, երբ սթափւել ուզենայ, նա ամեն բանի վրէ՛ գնայ, սակայն նա վախկոտ է... Վաճառականը կ'ասի, ո՞վ է նրան կողոպտել, այն ժամանակ իւանին է՛լ ազատւելիք չ'կայ Սիրիից, իսկ զրանից նա կրակից է՛լ առաւել է վախենում...

Մի ժամից աւել էր անցել, իսկ իւանը դեռ չէր վերադարձել: Թանկարծ Մարիան լսում է նախասննակում ինչ—որ թխթխկոց: Նէ արագութեամբ դուռանից վեր կացաւ և լայն բացեց դուռը: Եարդեայ կտուրի արանքներից թափանցած առաւօտայ լուսարացը հնարաւորութիւն տուեց նէրան տեսնելու, ինչ է կատարւում նախասննակում: Իւանը կացնով բարձրացնում էր գերանը, որը ընկած էր անկիւնում, և այնպէս էր զբաղւած իր գործով, որ մինչև անգամ չը նկատեց ըրոջը: Երբ գերանը բարձրացաւ, նա կոխեց նրա տակ մի ինչ—որ բան և նորից գերանը իր առաջնայ տեղը վար դրեց:

— Ինչ ես այստեղ անում, ժայն տես երան Մարիան:

— Կորիւր, քանի անջնաս ես, պատասխանեց նա:

— Ո՛հ բարի բան չի՛ գուշակում իմ սիրտը, — ասաց Մարիան և մօտեցաւ եղբորը: — Ո՛ւր ես թողել դու վաճառականին, հարցրեց նէ:

— Գնաց, — պատասխանեց իւանը:

— Ասա՛ ինձ ուղիղը, թէ չէ կը սկսեմ պողաւ, կը զարթեցնեմ, ոտքի կը կանգ-

նեցնեմ հասարակութիւնը, Խոստովանի՛ր, խելակորոյս արտասանեց Մարիան և բռնեց եղբոր ձեռքը:

Իւանը մի սաստիկ շարժումով հեռու նետեց ըրոջը:

Մօտակայ գիւղում զանգակները հնչեցին առաւօտայ ժամերգութեան համար, այդ զօղանչիւնը սթափեցրեց իւանին... Նա դողաց և ձեռքից վար գցեց կացինը:

— Ինչ ես արել վաճառականի հետ, — կպում էր Մարիան, — զղջա՛, չարագործ:

— Սպանեցի... կամաց արտասանեց նա:

Մարիան թոյլ կերպով ճչաց ու փուեց յատակին:

Թրգ. ԱՍՏՈՒԽԱՏՈՒՐ ԲԷԿ-ՅՈՎԱ.

Շարայարկի



Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Վ Ե Ն Ե Տ Կ Ո Ց

Ա

ԾՈՎՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Քիչ ատենէն պալատականը ժողովեցան Պոչիկոյորոյի վրայ, որուն համակ ոսկեշող կողերն արեւուն դէմ կը ցուպընէին նաւուն ողնափայտին վրայ դրած սանգներն, արաբական քանդակները, յուշկապարիկները և մտացածին կենդանիները, որոնցմով վենետիկեան արուեստին երեւակայութիւնը զարդարած էր նաւը: Պոչիկոյորոյ, ինչպէս վերը բարեք, հսկայածե տարօրինակ նաւ մ'էր, և մի միայն այս հանդէսին կը ծառայեր:

Աղբիականին այս հսկայ նաւը դարմ'է գրեթէ որ վենետիկոյ նաւաբանին մէջ կը քնանայ իր յետին թուրը: Այս սողորը գրողն տասներհինգ տարի առաջ (1866) տեսած է զայն, անյայտացող պետութեան մը աւերակն, աւատրիական զինուորնեւուն հսկողութեան ներքեւ: Այսօր, ինչ որ կը մնայ Պոչիկոյորոյին խաւիոյ պահպանութեան յանձնուած է: Սակայն Պերճափայլ Հասարակապետութիւնը կը հանգչի առ յաւէտ լճակին խորը, ուր օր մը վենետիկն ալ պիտի խորասուզի: